ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 180814

ՀՀ Լոռու մարզ, գ. Թեղուտ «14» օգոստոսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող խոշորացված համայնքը (այսուհետ՝ Համայնք), ի դեմս Համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի, ով գործում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, մի կողմից, և

«Թեղուտ» ՓԲ ընկերությունը (ՀՎՀՀ 02700773, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Թեղուտ, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 2) (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Գլխավոր տնօրեն Սահակ Կարապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

Համայնքը և Ընկերությունը միասին այսուհետ կանվանվեն Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

Կողմերը ցանկանում են ապահովել իրենց միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնականոն ու անխաթար զարգացումը և հայտնել են իրենց պատրաստակամությունը ձեռնարկել իրենցից կախված բոլոր հնարավոր ողջամիտ քայլերը Պայմանագրի նպատակներին հասնելու և դրա շրջանակներում անհրաժեշտ փաստացի և (կամ) իրավաբանական գործողությունների իրականացման համար,

ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ

1) արդյունավետորեն և համաձայնեցված կարգով լուծել Թեղուտի հանքահարստացուցիչ համալիրի հետ կապված բնապահպանական, սոցիալական, աշխատանքի անվտանգության ոլորտներին, ինչպես նաև Ընկերության, նրա աշխատողների ու հարակից համայնքների բնակիչների ներդաշնակ հարաբերությունների զարգացմանը, ենթակառուցվածքային օբյեկտների կառուցմանը ու սոցիալական բնույթի այլ հարցերին վերաբերող հիմնախնդիրները՝ ապահովելով Համայնքի երկարաժամկետ կայուն զարգացման նոր հնարավորությունները,

2) ապահովել Թեղուտի հանքահարստացուցիչ համալիրի հնարավորին արագ վերագործարկումը՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենսդրություն), մասնավորապես ՀՀ ընդերքի, բնապահպանական, քաղաքաշինական ու տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով սահմանված պահանջներն ու ընթացակարգերը,

3) բարձրացնել Համայնքի հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիության մակարդակը,

4) ստանալ Ընկերության փորձից, ռեսուրսներից, տեխնոլոգիաներից, արդյունավետությունից և նորարարության հետ կապված կարողություններից բխող օգուտները,

5) ապահովել հանրային ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների ոլորտում հանրության առջև հաշվետվողականությունը և թափանցիկությունը,

6) ներգրավել լրացուցիչ ներդրումներ (ըստ անհրաժեշտության) նոր հանրային ենթակառուցվածքներ ստեղծելու համար,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ

Ընդհանուր նպատակներին հասնել փոխադարձ համաձայնությամբ ու Կողմերի շահերը երաշխավորող պայմանավորվածություններով,

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Պայմանագրում.

ա) բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան է բխում կոնկրետ դրույթի ենթատեքստից, եզակիով օգտագործված բառերը ներառում են նաև հոգնակին և հակառակը,

բ) հղումն այլ փաստաթղթի կներառի այդ փաստաթուղթը՝ բոլոր փոփոխություններով և լրացումներով,

գ) վերնագրերը ներառված են միայն հղումների մատչելիության համար և չեն կարող ազդել Պայմանագրի դրույթների մեկնաբանության վրա:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Պայմանագրով սահմանված պայմաններով և շրջանակներում Ընկերությունը համաձայնվում է Համայնքի վարչական սահմաններում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս մշտապես ապահովել Համայնքի հանրային և կայուն զարգացման շահերը հաշվի առնելը և իր տնտեսական շահերի հետ համահավասար դասակարգելը, իսկ Համայնքը՝ Օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքների և լիազորությունների շրջանակներում, պարտավոր է աջակցել Ընկերության կողմից Համայնքի վարչական սահմաններում ձեռնարկատիրական գործունեության և զարգացման ծրագրերի իրականացմանը:

2.2. Պայմանագիրը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

<u>ա) **Կողմերի գործողությունների համատեղությունը և պարտադիր լինելը, պարտավորությունների կատարման անխուսափելիությունը.**</u> Կողմերը պարտավորվում են Պայմանագրով նախատեսված և (կամ) ապագայում իրականացվելիք գործողությունները կատարել փոխադարձ համաձայնությամբ՝ ունենալով Համայնքի կայուն զարգացման հեռակա նպատակը և գերակա շահը և ապահովելով միմյանց հետ փոխշահավետ համագործակցության պայմանները,

<u>բ) **Պայմանագրով նախանշված նպատակների գերակայությունը և դրանց իրականացմանը նպատակաուղղված Կողմերի գործողությունների կատարման անհրաժեշտությունը.**</u> Կողմերը ստանձնում են լրիվ և անվերապահ փոխադարձ պարտավորվածություն ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ Պայմանագրով սահմանված նպատակներին հասնելու համար,

<u>գ) **Կողմերի հաշվետվողականությունը և թափանցիկությունը.**</u> Պայմանագրով սահմանված և դրանցով պայմանավորված կամ Պայմանագրի հետ անխզելիորեն կապված պարտավորություններ իրականացնելիս Ընկերությունը պարտավոր է ներկայացնել համապատասխան հաշվետվություններ (այդ թվում՝ ֆինանսական)՝ իր կողմից իրականացված միջոցառումների, ծրագրերի վերաբերյալ: Նա միաժամանակ պարտավոր է իր հետագա ծրագրերի իրականացման կարգն ու պայմանները համաձայնեցնել Համայնքի հետ: Իր հերթին Համայնքը պարտավոր է Պայմանագրի համաձայն իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել Ընկերությանը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. **Համայնքը պարտավորվում է.**

3.1.1. Ընկերությանը տրամադրել բաց, ամբողջական և իրական անհրաժեշտ տեղեկատվություն՝ Պայմանագրով նախատեսված գործողությունների իրականացման և ապագայում նախաձեռնելիք ծրագրերի, Ընկերությանը հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.1.2. Ընկերությանը տեղեկացնել իրեն հայտնի ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել կամ որևէ կերպ դժվարին կամ անհնարին դարձնել Պայմանագրի իրագործումը: Սույն կետով սահմանված տեղեկացումը Համայնքը պետք է կատարվի համապա-

տասխան փաստի և (կամ) հանգամանքների մասին տեղեկությունը ստանալու (իրեն հայտնի դառնալու) պահից 5-օրյա ժամկետում:

3.1.3. Պայմանագրով սահմանված կարգով և իր իրավասությունների շրջանակներում ամեն կերպ աջակցել Ընկերությանը՝ Պայմանագրով սահմանված պարտավորությունները և գործողությունները պատշաճ մակարդակով իրագործելու հարցում:

3.1.4. Իրականացնել Պայմանագրի շրջանակներում և Համայնքի իրավասությանը վերաբերվող բոլոր փաստաթղթերի արագ և պատշաճ պատրաստումը և ձևակերպումը:

3.1.5. Ոչ ավել, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր պատասխանել Ընկերության բոլոր նամակներին, գրություններին, առաջարկություններին, բողոքներին, հարցումներին և նախազգուշացումներին:

3.1.6. Անշեղորեն պահպանել Պայմանագրի պայմաններն ու պարտավորությունները:

3.1.7. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ կատարելով իր կարգավիճակից և իրավասությունից բխող այնպիսի գործողություններ և միջոցառումներ, որոնք կապահովեն Ընկերության՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացումը:

3.2. **Համայնքն իրավունք ունի.**

3.2.1.Պայմանագրի գործողության ընթացքում՝ ցանկացած պահի և Ընկերության կողմից Պայմանագրի համաձայն իրականացվող գործողությունների ցանկացած փուլում, Ընկերությունից ստանալ համապատասխան գործողությունների, պարտավորությունների, ինչպես նաև իրեն (Համայնքին) հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ բաց, ամբողջական, արժանահավատ և իրական անհրաժեշտ տեղեկատվություն:

3.2.2. Վերահսկել Ընկերության կողմից իրականացվող քայլերի և գործողությունների համապատասխանությունը Պայմանագրին՝ այդ նպատակով Ընկերությունից պահանջել անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր և հաշվետվություններ, որոնք Ընկերության կողմից ենթակա են տրամադրման Համայնքի համապատասխան պահանջը ստանալու պահից 15-օրյա ժամկետում: Կողմերի լրացուցիչ համաձայնությամբ կոնկրետ տեղեկատվության տրամադրման համար կարող է սահմանվել այլ՝ ավելի երկար տևողությամբ ժամկետ:

3.2.3. Ընկերությանը ներկայացնել առաջարկներ և դիտողություններ, եթե Ընկերության գործունեությունը կամ անգործությանը շեղվում է Պայմանագրի նպատակներից, կամ այլ՝ Համայնքի կամքից անկախ հանգամանքների պատճառով վտանգվում է Պայմանագրի հետագա իրականացումը:

3.2.4. Կասեցնել Պայմանագրի շրջանակներում իր ստանձնած պարտավորությունների հետագա կատարումը և (կամ) հրաժարվել դրա իրականացումից և լուծել այն, եթե Ընկերությունը շարունակական կերպով խախտում է Պայմանագրի պայմանները:

3.3. **Ընկերությունը պարտավորվում է.**

3.3.1. Կարևորելով Թեղուտի հանքահարստացուցիչ համալիրին հարակից համայնքների բնապահպանական, բնակիչների առողջության ու անվտանգության հետ կապված խնդիրները, մինչև արտադրական (հանքաքարի արդյունահանման և խտանյութի արտադրության) գործընթացների վերագործարկումը ապահովել Օրենսդրությամբ պոչամբարների պատվարների ստատիկ և սեյսմիկ կայունության տեխնիկական և գոտիականության նորմատիվների (այդ թվում՝ առկա պոչամբարի տարածքի համար 0.43g արագացումով՝ պարբերաբար սեյսմիկ տատանումների դիմադրությամբ) պահպանումով նախագծային և այլ լուծումների առկայությունը (ստացումը) և երաշխավորել ստացված նախագծային լուծումների հիման վրա վերանորոգվող պոչամբարի պատվարի հետագա համապատասխանությունը Օրենսդրությամբ առաջադրված պահանջներին:

3.3.2. Համապատասխան նախագծային լուծումների տեխնիկական ու Օրենսդրությամբ սահմանված այլ փորձաքննության արդյունքներով, ինչպես նաև պոչամբարի վերանորոգման գործողությունների կատարման համար ստացված թույլտվություններով սահմանված կարգով ու պայմաններով անհապաղ ձեռնամուխ լինել Թեղուտի հանքահարստացուցիչ համալիրի վերագործարկմանը:

3.3.3. Թեղուտի հանքահարստացուցիչ համալիրի վերագործարկման գործողությունների իրականացման ժամանակ անհրաժեշտ աշխատանքների (ինչպես մասնագիտացված, այնպես էլ ոչ մասնագիտացված) համար մարդկային ռեսուրսները հնարավորինս ապահովել Շնող խոշորացված համայնքի (Թեղուտ, Շնող և Քարկոփ բնակավայրերի) բնակիչներից:

3.3.4. Թեղուտի հանքահարստացուցիչ համալիրի վերագործարկումից հետո նոր արտադրական (աշխատանքային) ծրագրում ներառել Համայնքին վերաբերող սոցիալական ուղղվածության տարրեր, այդ թվում (սակայն չսահմանափակելով)՝ բնապահպանական, սոցիալական, աշխատանքային անվտանգության, աշխատողների և Շնող խոշորացված համայնքի (Թեղուտ, Շնող և Քարկոփ բնակավայրերի) բնակիչների ներդաշնակ հարաբերությունների և այլ սոցիալական բնույթի հարցերին վերաբերող ենթածրագրեր, որոնց շրջանակներում Ընկերության և Համայնքի հարաբերությունների շրջանակներում պետք է նաև ապահովվի նվազագույնը Պայմանագրի բաղկացուցիչ մասը հանդիսացող՝ 2017 թվականի սեպտեմբերի 05-ին Ընկերությանը տրված ISO 14001 և OHSAS 18001 ստանդարտներին համապատասխանության սերտիֆիկատներով հավաստվող մակարդակները: Ընկերությունը պարտավորվում է սույն կետով նախատեսված ուղղություններով համապատասխան ենթծրագրերի իրականացման ուղղությամբ որպես ֆինանսավորում տարեկան կտրվածքով կատարել ներդրում (մասհանում) ընդհանուր ծավալով ոչ պակաս, քան նախորդ ֆինանսական տարվա ընթացքում իր ունեցած ֆինանսատնտեսական գործունեության համախառն շրջանառության 1 (մեկ) տոկոսի չափով: Ընկերության կողմից համապատասխան գումարի տրամադրման կարգը, ներառյալ՝ կոնկրետ նպատակների իրագործման համար դա ամբողջությամբ կամ մասամբ Համայնքի բյուջե վճարելու հնարավորությունը, Կողմերը կսահմանեն լրացուցիչ համաձայնությամբ:

3.3.5. Պայմանագրի 3.3.4 կետի անխափան իրագործման, այդ թվում՝ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բավարար չափի տրամադրման նկատառումներից ելնելով, լրացուցիչ ջանքեր գործադրել ապահովելու արտադրության տեխնիկական և գործնական արդյունավետությունը՝ որպես նվազագույն թիրախ վերցնելով 2015-2017թթ.-ի իր միջին շրջանառությունը:

3.3.6. Համայնքին տրամադրել բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Պայմանագրով նախատեսված գործողությունների իրականացման և ապագայում նախաձեռնելիք ծրագրերի, Համայնքին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.3.7. Համայնքին տեղեկացնել իրեն հայտնի ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել կամ որևէ կերպ դժվարին կամ անհնարին դարձնել Պայմանագրի իրագործումը: Սույն կետով սահմանված տեղեկացումը Ընկերությունը պետք է կատարվի համապատասխան փաստի և (կամ) հանգամանքների մասին տեղեկությունը ստանալու (իրեն հայտնի դառնալու) պահից 5-օրյա ժամկետում:

3.3.8. Անշեղորեն պահպանել Պայմանագրի շրջանակներում Կողմերի կողմից հաստատված պայմաններն ու պարտավորությունները:

3.3.9. Ոչ ավել, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր պատասխանել Համայնքի բոլոր նամակներին, գրություններին, առաջարկություններին, բողոքներին, հարցումներին և նախազգուշացումներին:

3.3.10. Հանքարդյունահանման կամ ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելիս ղեկավարվել բնապահպանության ոլորտը կանոնակարգող Օրենսդրությամբ, սահմանված կարգով ու ժամկետներում իրականացնել հանքարդյունահանման կամ ուսումնասիրության նախագծերով հաստատված շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները, օգտագործել արդիական տեխնիկական սարքավորումներ և կիրառել մեթոդներ՝ նպատակաուղղված շրջակա միջավայրին վնաս պատճառելը կանխելուն, արտանետումների, արտահոսքերի և արտադրական թափոնների կրճատմանը, բնական ռեսուրսների չնախատեսված կորստից կամ վնասից խուսափելուն և բնապահպանական սահմանափակումների, նորմերի ու կանոնների պահպանության նկատմամբ հսկողության իրականացմանը:

3.3.11. Պայմանագրի 3.3.10 կետի պարտավորությանը համահունչ՝ երաշխավորել, որ իր կողմից կձեռնարկվեն առավելագույն հնարավոր միջոցներ՝ հանքարդյունահանման կամ ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում ներդնելու համար շրջակա միջավայրին հասցվող վնասը նվազեցնող առաջադեմ տեխնոլոգիաներ:

3.4. **Ընկերությունն իրավունք ունի.**

3.4.1. Համայնքից ստանալ բաց, ամբողջական, արժանահավատ և իրական անհրաժեշտ տեղեկատվություն՝ Պայմանագրով Համայնքի կատարված գործողությունների և պարտավորությունների վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.4.2. Կասեցնել Պայմանագրի գործողությունը և (կամ) հրաժարվել դրա իրականացումից և լուծել այն, եթե Համայնքի կողմից, շարունակական կերպով խախտվել են Պայմանագրի պայմանները, իսկ նախազգուշացումների արդյունքում՝ շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

3.4.3. մերժել Համայնքի կողմից Պայմանագրով նախատեսված տեղեկատվություն ստանալու պահանջը, եթե Ընկերության համար այդ տեղեկատվությունը համարվում է գաղտնի (ինչպես սահմանված է Պայմանագրի 6-րդ բաժնով) կամ դրա բացահայտումը արգելվում է Օրենսդրությամբ կամ Ընկերության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորություններով: Նման դեպքերում Ընկերությունը պարտավոր է ներկայացնել հիմնավորված պատասխան՝ նշելով տեղեկատվության չտրամադրման պատճառները և հիմքերը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

4.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

4.2. Պայմանագրով նախատեսված ցանկացած փոփոխություն և (կամ) լրացում իրականացվում է Կողմերի միջև գրավոր համաձայնությամբ, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի ցանկացած փոփոխություն և (կամ) լրացում ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4.3. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել նաև Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ միակողմանի, Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

4.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը՝ ելնելով հետևյալ հիմքերից.

4.4.1. Մյուս Կողմը, Պայմանագրի իրականացման շրջանակներում, թույլ է տվել բազմակի և (կամ) այնպիսի կոպիտ խախտումներ և (կամ) Պայմանագրի պայմանավորվածություններից այնպիսի շեղումներ, որոնք էականորեն վտանգում են Պայմանագրով Կողմերի համար իրենց պարտավորությունների կատարումը,

4.4.2. Սեփական նախախաձեռնությամբ, եթե ի հայտ են եկել այնպիսի էական պատճառներ և հանգամանքներ, որոնք ֆիզիկապես անհնարին են դարձնում Պայմանագրի հետագա իրագործումը,

4.4.3. Օրենսդրության փոփոխությունները, պետական մարմինների կողմից ընդունված այնպիսի ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունումը, որոնք անհնարին և (կամ) դժվարին են դարձնում Պայմանագրի հետագա իրագործումը, և (կամ) էականորեն վտանգում են դրա արդյունավետությունը, որի արդյունքում վտանգվում է Պայմանագրի նպատակների իրականացումը,

4.4.4. Կողմերի կամքից և գործողությունների անկախ ծագած այնպիսի հանգամանքներից, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրի հետագա կատարումը (Ֆորս – Մաժոր), համաձայն Պայմանագրի 5-րդ բաժնի,

4.4.5. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

4.5. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պետք է լինի պատճառաբանված, ինչի մասին նախաձեռնող Կողմը պարտավոր է պատշաճ կերպով և ողջամիտ ժամկետներում՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգի, ծանուցել մյուս Կողմին:

4.6. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման և դադարեցման դեպքում Կողմերն ստորագրում են արձանագրություն, որտեղ նշվում են Կողմերի դիրքորոշումները՝ կապված Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ, ինչպես նաև պարզաբանվում են փոխադարձ գույքային, իրավաբանական և հաշվապահական փոխհարաբերություններն ու այլ հարցեր:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ) ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով՝ այսինքն տվյալ իրավիճակում արտակարգ և անկանխելի հանգամանքների, որոնք ծագել են Պայմանագիրը կնքելուց հետո, և որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել և դրանք պայմանավորված չեն Կողմերի անզգուշության կամ բացթողման հետ, և որը ողջամիտ ջանասիրություն դրսևորելու դեպքում հնարավոր չէր կանխել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը և այլ բնական աղետները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, խռովությունները, ապստամբությունները, հեղաշրջումները, քաղաքական հուզումները, ահաբեկչական գործողությունները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5.2. Անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու դեպքում Կողմերը պարտավոր են այդ պահից սկսած այդ մասին անհապաղ միմյանց տեղեկացնել, իսկ դրա անհնարինության դեպքում ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում: Ծանուցման մեջ պետք է նշվի համապատասխան հանգամանքների վրա հասնելու սկիզբը, տևողությունը, եթե դա հնարավոր է կանխատեսել: Սույն կետով

նշված պարտականությունը չկատարելը զրկում է կողմին այդ հանգամանքների ազդեցությամբ պատասխանատվությունից ազատվելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ չիրազեկելը կամ կետանցով իրազեկելը պայմանավորված է եղել հենց այդ հանգամանքներով:

5.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության վերանալու դեպքում Կողմերը պարտավոր են ողջամիտ ժամկետում տեղեկացնել միմյանց՝ նշելով նաև իրենց պարտավորությունների կատարման ժամկետները:

5.4. Կողմը իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պարտավոր է մյուս Կողմին հատուցել ցանկացած վնաս, բաց թողնված օգուտ, կորուստ և ծախս, որոնք առաջացել են Օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով:

6. ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

6.1. Պայմանագրի իմաստով գաղտնի տեղեկությունը ներառում է, առանց որևէ սահմանափակման, առկա կամ ապագայում ձեռք բերվելիք ցանկացած տեխնիկական, առևտրային, գիտական տեղեկություն, ֆինանսական տվյալ և բանաձևեր, հաշվետվություններ, առևտրային, բանկային, հարկային գաղտնիք (ներառյալ նոու-հաու), մեխանիզմ, գործընթացներ, լուծումներ, գծանկարներ, նմուշներ, տեխնիկական նկարագրություններ, տեխնիկական գիտելիքներ և ցանկացած ձևով արտահայտված տեղեկություն (ներառյալ՝ Պայմանագիրը, դրա պայմանները, դրույթները, բովանդակությունը) (այսուհետ՝ Գաղտնի տեղեկություն), որը վերաբերում է Կողմին և որոնք Կողմը ձեռք է բերվել Պայմանագրի պայմանների իրականացման և կատարման հետ կապված:

6.2. Կողմերը պարտավոր են միջոցներ ձեռնարկել ապահովելու Գաղտնի տեղեկության պաշտպանությունը՝ դրսևորելով անհրաժեշտ, բավարար, ողջամիտ շրջահայացություն, մասնավորապես՝ կանխել գաղտնի տեղեկությունների ապօրինի օգտագործումը, օտարումը, տարածումը, հրապարակումը: Կողմերի անհրաժեշտ, բավարար, ողջամիտ շրջահայացությունը գնահատելիս պետք է հաշվի առնել այնպիսի գործողությունների իրականացումը և միջոցառումների ձեռնարկումը, որոնք համեմատելի հանգամանքներում ցանկացած ողջամիտ անձ կկատարեր Գաղտնի տեղեկության գաղտնիության պահպանման համար: Կողմերը պարտավոր են Գաղտնի տեղեկությունը օգտագործել բացառապես Պայմանագրով նախատեսված նպատակների համար:

6.3. Պայմանագրի լուծման և դադարման դեպքում Կողմերը պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ իրականացնելուց կամ անփութություն դրսևորելուց, որը կարող է հանգեցնել Գաղտնի համարվող տեղեկությունը հրապարակմանը կամ երրորդ անձանց կողմից դրա ձեռքբերման համար այլ ձևերով մատչելի դարձնելուն:

6.4. Սույն բաժնով նախատեսված պահանջների խախտումը Կողմերի համար առաջացնում է օրենքով և Պայմանագրով նախատեսված պատասխանատվություն:

7. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Պայմանագրին առնչվող, Կողմերին տրվող ցանկացած ծանուցում, պահանջ կամ այլ հաղորդակցություն պետք է լինի գրավոր: Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան է նախատեսված Պայմանագրով, այդպիսի ծանուցումը, պահանջը կամ այլ հաղորդակցությունը համարվում է պատշաճ կարգով տրված կամ կատարված, երբ այն հանձնվում է առձեռն կամ փոստի միջոցով այն անձին, որին այն պետք է կամ կարող է տրվել կամ կատարվել, այդ Կողմի ստորև նշված հասցեով կամ այնպիսի այլ հասցեով, որի մասին այդ Կողմը ծանուցմամբ տեղեկացրել է Կողմին, որը տալիս կամ փոխանցում է նման ծանուցում, պահանջ կամ այլ հաղորդակցություն

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1.Կողմերի միջև Պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1.Սույնով Կողմերն անվերապահորեն հավաստում են, որ Պայմանագրի, ինչպես նաև Պայմանագրի առարկայի գծով Կողմերի կողմից տրամադրված ցանկացած փաստաթուղթ, ներառյալ՝ տեղեկատվություն պարունակող ցանկացած առարկա, ճիշտ են և ամբողջական, չեն պարունակում կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, և որ հակառակն ապացուցող փաստեր տիրապետող Կողմն իրավունք ունի ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ՝ կեղծիքի կամ անօրինական գործողությունների բացահայտման և Օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական և (կամ) քաղաքացիական պատասխանատվության ենթարկման համար:

9.2. Պայմանագրով նախատեսված պարտավորության կամ պայմանի խախտման կապակցությամբ մյուս Կողմի նկատմամբ պատասխանատվության միջոցներ չկիրառելը չի կարող դիտվել որպես Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կամ պայմանների հետագա խախտման դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավունքից հրաժարում:

9.3. Եթե Պայմանագրի ցանկացած դրույթ կամ պայման անվավեր է ճանաչվում դատարանի, տրիբունալի կամ գործարքի վավերականություն ստուգող այլ իրավասու մարմնի կողմից, ապա նման դրույթները և պայմանները պետք է հանվեն Պայմանագրից՝ ազդեցություն չունենալով Պայմանագրի այլ պայմանների կամ դրույթների վավերականության և գործողության վրա:

9.4. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.5. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ՝ Պայմանագրի կողմերն, անձամբ (ի դեմս իրենց լիազորված ներկայացուցիչների), բարեխղճության սկզբունքին ամբողջությամբ համապատասխան ստորագրեցին Պայմանագիրն իրենց անվան ներքո, Պայմանագրի նախաբանում նշված ամսաթվին:

Համայնք	**Ընկերություն**
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող խոշորացված համայնք	«Թեղուտ» ՓԲ ընկերություն ՀՎՀՀ 02700773, հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Թեղուտ, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 2
Դավիթ Ղումաշյան Համայնքի ղեկավար	Սահակ Կարապետյան Գլխավոր տնօրեն